

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 22-ի N 1334 - Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ, ՍՈՒՐԴՈՒԹԱՐԳՄԱՆՉԻ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՆՐԱ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Թարգմանիչն ընտրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղակայված Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան որակավորված թարգմանիչների ցանկից, որից հետո որպես թարգմանիչ է նշանակվում իրավասու մարմնի որոշմամբ: Իրավասու մարմինը թարգմանչի ներգրավելիս պետք է հաշվի առնի թարգմանչի գործունեության վայրը և ապահովի իր վարույթներում նույն լեզվով բոլոր թարգմանիչների հաջորդական ներգրավվածությունը:

2. Իրավասու մարմինը որպես թարգմանիչ նշանակելու մասին որոշում ընդունելուց հետո, ինչպես նաև տվյալ գործով թարգմանչի պարտականությունների կատարումն ավարտվելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը դրա մասին տեղյակ է պահում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը, որն էլ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կայքում հրապարակում է տեղեկություն համապատասխանաբար տվյալ թարգմանչի՝ գործով ներգրավվածության կամ գործով պարտականությունների կատարումն ավարտելու մասին:

3. Եթե Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կայքում տեղակայված ցանկում բացակայում են համապատասխան լեզվին տիրապետող թարգմանիչները, ապա համապատասխան լեզվին չտիրապետող և պետական միջոցների

հաշվին այդ ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձը կարող է ինքն առաջադրել համապատասխան թեկնածուի, որին իրավասու մարմնի գրության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով անհապաղ կազմավորված հանձնաժողովը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ վարույթն իրականացնող մարմնի հիմնավորման դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում «Թարգմանիչների որակավորման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում տրամադրում է որակավորման վկայական:

4. Սուրդոթարգմանչի կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար պետության միջոցների հաշվին օգնականի ծառայություններ մատուցող անձի ներգրավման նպատակով իրավասու մարմինը լսողության և խոսքի կամ տեսողական սահմանափակումներ ունեցող անձանց ուսուցմամբ զբաղվող՝ Հայաստանի Հանրապետությունում գործող պետական կամ համայնքային որևէ ուսումնական հաստատության, հաշվի առնելով նրա գտնվելու վայրը, գրությամբ առաջարկում է ներկայացնել սուրդոթարգմանչի կամ օգնականի թեկնածուի: Համապատասխան հաստատությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան թեկնածուի, ով իրավասու մարմնի որոշմամբ նշանակվում է սուրդոթարգմանչի կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնական:

5. Իրավասու մարմնի որոշման մեջ նշվում են ծառայություններ մատուցող անձի տվյալները (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները), թարգմանչի դեպքում այն լեզուն, որով իրականացվելու է թարգմանությունը, ծառայությունների մատուցման ժամկետները և այլ անհրաժեշտ տվյալներ:

6. Վճարումը կատարում է Հայաստանի Հանրապետությունը՝ իրավասու մարմնի որոշման կամ գրության, ծառայություններ մատուցող անձի ստորագրությամբ հաստատված գրության և իրավասու մարմնի աշխատակազմի կողմից տրված զեկուցագրի հիման վրա:

7. Իրավասու մարմնի աշխատակազմի հաստատած զեկուցագրում նշվում են ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում), ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը, իրավասու մարմնի անվանումն ու այն վարույթի անվանումը, որում անձը ներգրավվել է ծառայությունների մատուցման նպատակով:

8. Թարգմանչին թարգմանչական աշխատանքի համար վճարվելիք գումարի չափը որոշվում է՝ մեկ էջ թարգմանության դիմաց 1000-2000 դրամի, մեկ ժամ թարգմանության դիմաց 2000-3000 դրամի հաշվարկով, իսկ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին՝ մեկ ժամ մատուցած ծառայությունների դիմաց 1000-2000 դրամի հաշվարկով: Վճարվելիք գումարի կոնկրետ չափը որոշվում է վարույթն իրականացնող մարմնի, թարգմանչի, տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի և վարույթի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում, եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի, եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես էջը, բայց պակասում է մեկ էջից, ապա այն հավասարեցվում է մեկ էջի, իսկ եթե

թարգմանության մի հատվածը պակաս է կես էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես էջի:

9. Եթե ծառայությունների մատուցման համար ներգրավված անձինք մեկից ավելի են, ապա նրանց հատուցման ենթակա ծախսերը, սույն կարգի համաձայն, որոշվում են յուրաքանչյուրի համար առանձին:

10. Սույն կարգի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգի, վարձատրության չափը և կարգը սահմանելու վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ